


երկիրները՝ ազգաց պատմութիւնն ու լեզուները ուսումնասիրելու համար: Այսօր նա կը տիրապետէ և հմուտ է հետեւեալ լեզուներուն՝ ֆրանսերէն, գերմաներէն, անգլիերէն, իտալերէն, լատիներէն, յունարէն, եբրայերէն, պարսկերէն, արաբերէն, իսկ վերջին տարիներս նաեւ հայերէնի և ասորերէնի:

Հայագիտութիւնը այժմ անոր հոգացողութեան և ուսմասիրութեան գլխաւոր առարկան է: Եւրոպացի հայագէտներու և մանաւանդ լեզուաբաններու հին և նոր ուսումնասիրութիւններն իբր աղբիւր ու նենալով նա խորապէս ուսումնասիրեց Հայ գրաբար լեզուն և քերականութիւնը, միաժամանակ նաեւ վարժեցաւ կարգալ և խօսիլ արեւելահայ (ռուսահայ) բարբառը: Հայերէն և պարսկերէն լեզուներն իրար հետ համեմատութեան դնելով յայտարարեց անոնց հոմանիշ բառերը, յարաբերական ձեւերն ու փոխ ազդեցութիւնները, լեզուական մերձեցումները ևայլն: Լեզուաբանական այս ուսումնասիրութիւններէն զատ, Հայր Ռիկտէրը վերին աստիճանի աչալըջութեամբ և մանրակրկիտ կերպով ուսումնասիրած է նախաքրիստոնէական Հայաստանի և Հայութեան պատմութիւնը Հիթիթներէն, իտալերէն սկսեալ: Այս խիստ կարեւոր աշխատանքներուն համար իբրեւ աղբիւր ունեցած է բեւեռագրական և վանեան արձանագրութիւնները ինչպէս նաեւ ամէն տեսակ գիտական հրատարակութիւնները, յատկապէս Յովսէփ Վրդ. Սանտալճեանի հոյակապ հատորը՝ (տպ. վենետիկ, Ս. Ղազար) Հայաստանի բեւեռագիրներուն մասին: Հայր Ռիկտէրը ծանօթ է մեր ոսկեդարեան մատենագրութեան և պատմագրութեան: Հիացմունք ունի Պատմահայր Մովսէս Խորենացիին հանդէպ:

Թաւրիզի մէջ, տարի մ'առաջ պատիւը ունեցայ ծանօթանալու անոր հետ և ժամանակ մըն ալ օգնեցի իրեն հայերէն

սորվելու համար: Բարեհամոյր, համալիրելի անձ մըն է, որ իւր գիտական խոր պատրաստութեամբ յարգանքի և պատկառանքի զգացումը կը ներշնչէ մարդու: Ամբողջ օրը իւր առանձնասենեակին մէջ նստած՝ խորասուզուած է գիտական աշխատանքներու, զիրքերու կոյտերու և հնագոյն պատմութեան լեզուաբանութեան մը-



Հայր Ռիկտէր

շուշապատ հորիզոններուն մէջ: Ճիշտ ա-միս մ'առաջ Թաւրիզէն անցաւ Ուրմի, ասորերէն լեզուն տեղւոյն մէջ ուսումնասիրելու համար: Գարնան մտադրութիւն ունի անցնելու պատմական Ասորեստան, Միջագետք և Սուրիա՝ դիտելու համար պատմական վայրերը: Մեծ ցանկութիւն ունի անցնելու վան քաղաքը տեղւոյն բեւեռագիր արձանագրութիւններն ու պատմավայրերը տեսնելու նպատակով:

Հ. ԱճԷՄԵԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Հ. Ղեւոնդ Վ. Տայեան, ամսոյս 1ին, Հոռմի մէջ հայ եկեղեցական երգի և յատկապէս Աղեղնախի շուրջ գեղեցիկ ճառախօսութիւն մ'ըրաւ, երաժշտական և ծիսագիտական ծանօթութիւններու հետ տալով նմոյշներ մեր անգուգական երգերէն: Ահա թէ ինչ կը գրէ «Osservatore Romano» օրագիրը, «Քառանկապետական բարձրագոյն վարժարան սրբազան երաժշտութեան» վերնագրին տակ.

«Անցեալ կիրակի, Փետր. 1ին, տեղի ունեցաւ կանուխէն զեկուցուած ճառախօսութիւնը Հայր Ղեւոնդ Տայեան Վենետիկ Միթիթարեանին՝ Աղեղնախի երգի մասին՝ Հայ եկեղեցւոյ մէջ:

ճառախօսը ներկայացուցաւ վարժարանին տեսուչ Աբբայ Ֆերրեթիի կողմէն որ խօսեցաւ Հ. Ղ. Տայեանի երաժշտական ուսումնասիրութեանց և արեւելեան ծէսերու երգին ուսման զարթումի մասին, և ինքզինքն երջանիկ համարեց որ քաջալեր կը հանդիսանար ներկայ փորձով Քառանկապետական վարժարանի սրբաձով Քառանկապետական վարժարանի մէջ, որ իր նախկին սաներուն մէջ ունեցեր էր նշանաւոր ճառախօսը: Ասի ժամէ մ'աւելի հետաքրքրեց իր ունկնդիրները:

Յետ ակնարկելու աւանդական ամէնէն սրբազան երգին, աղեղնախին, և անոր տարբեր գործածութեան՝ Արեւելեան և Արեւմտեան եկեղեցւոյ մէջ, անցաւ մի առ մի տեսնելու պատարագի և հայկական սրբազան ժամերգութեան երգերուն ցանկը միջանկեալ տալով մեղեդինքն ու նմոյշներ մը ըստ հին աւանդութեան որ նախանձախնդրութեամբ պահուած է Վենետիկ Ս. Ղազարու նշանաւոր մենաստանին մէջ, ուր Միթիթար Աբբահայր փոխադրեց պատառիկ մը կաթողիկէ Հայաստանին որ միացած է Պետրոսի Աթոռին:

ճառախօսը ինք եղանակեց այդ նմոյշները ամենանրբին արուեստով մը, և կրօնական այնպիսի ճոխ ու զեղուն զգացումով որ կրօնական արարողութեան մը ներկայ ըլլալու պատրանքն ունեցանք: Յուզումի սարսուռ մը հանեց մեր մէջ Աւագ ուրբաթի այն Աղեղնախի երգը՝ զոր ճառախօսը որակեց տարաբախտ Հայ ազգին մահուան քայլերգը:

Այս ամենահետաքրքրական ճառախօսութեան ներկայ էին Գերպ. Գոյունեան և Գերպ. Նազլեան արքեպիսկոպոսները, Գերպ. Տէր Աբբահայ մեան՝ հայ կղերանոցի միւս ուսուցիչներուն և

աշակերտներուն հետ, Վեր. Հ. Տ. Տէր - կիւլեան՝ ընդհանուր գործակալ (Ս. Գահին առջեւ) Միթիթարեանց ուրիշ հայրերու և ուսանողներու հետ, Արամ Պէյ, և ուրիշներ Հոռմի հայ գաղութէն. Գերպ. Ռէֆիշէ, Ծաքքարէլլա, Քորտէյրոյ, Փրինչիփի, Ուկոլինի, Սթանկէթի, Բենեդիկտեան կարգին ընդհանուր Աբբան, Աբբ. Ամէլի, Աբբ. Լուկանոյ, Կոմս և Կոմսուհի Քափէլլոյ, Խաւիոյ Արքունիքէն՝ Թագուհին ընթերակաց Կոմս Սէսէլլ, հրամ. Կորինի, հրամ. Լանտուչի, ճարտարագէտ Քաուչի, ինչպէս նաեւ ուսուցիչներ և աշակերտներ Սրբազան երաժշտութեան վարժարանին, Վատիկանեան կղերանոցին, Յունական կղերանոցին, Ս. Անտէմոսի վարժարանին, Ուլիթեաններու ուսանողարանին և ուրիշ շատ անձնաւորութիւններ, որ հուսկ երկար ծափերով դրուատեցին արժանապատիւ երգաբանն ու երգիչը: —

Պիտի դիտենք որ ակնարկուած «Ալէլուիա»ն «Մահու դատեալ»ն է. բայց Վր սխալի յօդուածագիրը, վասն զի ճառախօսը զայն կոչեց Marcia funebre della Chiesa Armena = Թաղմանական քայլերգ Հայ եկեղեցւոյ, և ոչ թէ բըշուռն հայ ազգին, իբր հրապարակային քայլերգ, ինչպէս ճոխէինք:

Յարգելի Հայրը իր ճառախօսութիւնը փակեց ուղղակի Աւագ ուրբաթի մեր Հ. Օգոստինոսի մեծ «Լոյս զուարթ»ով:

Մեր լիասիրտ խնդակցութիւնը երգաբան յարգելի հօր, որ այնքան փառքով ներկայացուց հայ եկեղեց. երգի շնորհալի գեղն ու արուեստը՝ զմայլանքի առարկայ ընելով զայն ընդհ. եկեղեցական երգի մասնագէտներու:

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Կիրակի 8 Փետր. կէսօրէ վերջ ժամը Յին, Մուրատեան վարժարանի տեսուչ Վեր. Հայր Սահակ Վրդ. Տէր-Մովսէսեան խիստ շահեկան բանախօսութիւն մը կատարեց հաստատութեան դահլիճին մէջ, նիւթ ունենալով «Վարդանանց պատերազմի պատմական նշանակութիւնը»:

Սրահը լեցուած էր 200է աւելի երկսեռ բազմութեամբ մը: Ներկաներուն մէջ կը նշմարուէին Գերպ. Վրդապետ Սրբազան, Վեր. Հ. Թէոդոր Վ. Սիրունեան, Պ. Խանգատեան և ուրիշ երեւելի անձնաւորութիւններ: